

Աղօթք [illegible] Եկեղեցւոյ [illegible]

ՀԱՅՐ ՍՈՒՐԲ ՏՈՒՐ

[illegible] զհամբերութիւն [illegible] մեզ ցոյց
[illegible] զշնորհս [illegible] մաքրեա ըն-
սիրտս մեր և [illegible] յամենայն փոր-
ձութենէ և յամենայն [illegible] և Օգ-
նական և պահապան լեր ծառայիս
քո Ամէն.





[illegible]
[illegible]այր • և [illegible]



Մոգուքն հրեշտակաւն աստեղովն գան
ընծայել առ Ք՟Ս կոյսն Մարիամ



Ծնունդն Յիսուսի Քրիստոսի ·
Տեառն Ա՟Ծ մերոյ։



* Սրբուհւոյ կուսին Մարիամու,
ընծայումն ՚ի տաճարն։



* Յերկոտասան Նահապետըն։



*Սուրբ Երեք Մանկունքն.





[illegible] հաւատացելոց հոգւոյ անձին հաստատեցելոց 'ի Քս̃. Օ որ արարեալ է Տեառն Ներսէսի Հայոց Կաթուղիկոսի.

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈվանիմ և երկիր պագանեմ քեզ Հայր և Որդի և սբ̃ Հոգի անեղ և անմահ բնութիւն արարիչ հրեշտակաց և մարդկան և ամ̃ եղելոց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս.

* Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ, անբաժանելի լոյս. միանձնական սբ̃ երրորդութիւն և մի ա̃ծութիւն արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ և անգիտութեան. և լուսաւորեա՛ ըզ միտս իմ 'ի ժամուս յայսմիկ. աղօթել քեզ 'ի հաճոյս և ընդունիլ 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա՛ քո արարա.

* Հայր երկնաւոր ա̃ծ ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդին քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպ̃ զանառակ որդին և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո.

*Որդի այ ած ճշմարիտ որ խոնար
հեցար 'ի հայրական ծոցոյ՝ և առեր
զմարմին 'ի սրբոյ կուսէն մարիամայ,
վն մերոյ փրկութե. խաչեցար և թա
ղեցար և յարեար 'ի մեռելոց՝ և համ
բարձար առ հայր. մեղայ յերկինս և
առաջի քո յիշեա զիս որպ զաւազակն
յորժամ գաս արքայութբ քով. և.

*Հոգի այ՝ ած ճշմարիտ, որ իջեր 'ի
յորդանան և 'ի վերնատունն. և լու
սաւորեցեր զիս մկրտութբ սբ աւա
զանին մեղայ յերկինս և առաջի քո.
մաքրեա զիս վերստին ածային հրով
քո որպ հրեղէն լեզուօք զառաքեալսն. և.

*Անեղ բնութի, մեղայ քեզ՝ մտօք
իմովք՝ հոգւով և մարմնով իմով. մի
յիշեր զմեղս իմ զառաջինս. վասն ան
ուանդ քում սրբոյ. և ողոր.

*Տեսող ամի, մեղայ քեզ խորհրդով
բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր
յանցանաց իմոց՝ և գրեա զանուն իմ
'ի դպրութն կենաց. և ողոր.

*Քննող գաղտնեաց, մեղայ քեզ՝
կամաւ և ակամայ՝ գիտութբ և ան
գիտութբ. թողութի շնորհեա մեղա
ւորիս զի 'ի ծննդենէ սբ աւազանին
մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի
ածութեդ քո զգայարանօք իմօք և
ամ անդամօք մարմնոյս. և ողոր.

*Ամենախնամ տր՝ դիր պահապան
աչաց իմոց զերկիւղ քո սբ՝ ոչ ևս հայ

իլ յարատ. և ականջաց իմոց, ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ ոչ խօսել զստութիւն. և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն. և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն. և ոտից իմոց ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն ս՟ցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց ամի. և ողոր.

* Հուր կենդանի ք՟ս. զհուր սիրոյ քոյ զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. և ողոր.

* Իմաստութիւն Հօր յ՟ս. տուր ինձ զիմաստութիւն. զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յ՟ամ ժամ և՛ի չար խորհրդոց և 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս. և ող.

Կամեցող բարեաց՝ տ՟ր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գընալ. այլ առաջնորդեայ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց՝ և.

* Թագաւոր երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց և զօրցո զսիրտ իմ, ատել զմեղս և սիրել զքեզ միայն և առնել զկամս քո

* Խնամող արարածոց՝ պահեա նշա

նաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատահմանց մեղաց' 'ի փորձութեանց դիւաց և 'ի մարդոց անիրաւաց' և յա՟մ վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ող.

*Պահապան ա՟մի՝ ք՟ս, աջ քոյ հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուէ և 'ի գիշերի 'ի նստել 'ի տան' և 'ի գնալ 'ի ճանապարհ 'ի ննջել և 'ի յառնել. զի մի՛ երբէք սասանեցայց. և ող.

*Տ՟ր իմ, որ բանաս զձեռն քո՛ և լընուս զա՟մ արարածս ողորմութ՟բ քով քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛, և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան. և ողոր.

*Դարձուցիչ մոլորելոց' դարձո՛ զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն. և բևեռեայ հոգի իմ, զսոսկալի օր մահուն' և զերկիւղ գեհենոյն' և զսէր արքայութեանն. զի զղջացայց 'ի մեղաց' և գործեցից զարդարութիւն. և ողոր.

*Աղբիւր անմահութ՟ն' աղբերացո 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան ո՟պ պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ' յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողոր.

*Պարգևիչ ողորմութեան' պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով. և բա րի գործով և սբ̃ մարմնոյ և արեանն քո հաղորդութե̃, գալ առ քեզ. և.

*Բարերար տր̃՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս • քաղցրութե̃ աւանդել զհոգի իմ • և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն • որք են ՚ի ներքոյ երկնից • և.

*Լոյս ճշմարիտ քս̃՝ արժանաւորեա զհոգի իմ, ուրախութե̃ տեսանել զլոյս փառաց քոց ՚ի կոչմանն աւուր և հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո • և ողոր•

*Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք Հօր, դատել զկենդանիս և զմեռեալս՝ մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայիս քո, այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութե̃նդ • և ող.

*Ամէն ողորմ տր̃՝ ողորմեաց ամ̃ հաւատացելոց ՚ի քեզ • իմոց և օտարաց ծանօթից և անծանօթից կենդանեաց և մեռելոց շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութի̃, որ առ իս յանցանաց • և դարձո զն̃ս ՚ի չարեացն զոր ունին վ̃ս իմ • զի ողորմութե̃նդ քում արժանի եղիցին • և ողոր.

*Փառաւորեալ Տր̃՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո՝ և կատարեա ՚ի բարի զխնդրուածս իմ • բարեխօսութե̃

սրբուհւոյ Ածածնին՝ և Յովհան
նու Մկրտչին և սբ̅յն Ստեփաննոսի
Նախավկային և սբ̅յն ԳՐԻԳՈՐԻ
մերոյ Լուսաւորչին. և սրբոց Առա
քելոց՝ և Մարգարէից՝ և Վարդա
պետաց՝ և Մարտիրոսաց՝ և սբ̅ց Հայ
րապետաց՝ Ճգնաւորաց Կուսանաց՝
միանձանց և ամ̅ սբ̅ց քոց, երկնաւո
րաց և երկրաւորաց. [illegible]
և երկրպագութիւն անբաժանելւոյ
սբ̅յ Երրորդութեանդ. յաւիտեանս յա
ւիտենից Ամէն.

*Ծառայիս այ̅ օգնական և
պահապան եղիցի, և յամ̅ չարեաց պա
հեսցէ և ազատեսցէ Ամէն.

*Ողջոյն քեզ Մարիամ լի շնորհօք
ուրախ լեր բերկրեալ տ̅ր ընդ քեզ.

*Օրհնեալ ես դու 'ի կանայս և օրհ
նեալ է պտուղ որովայնի քո Յս̅.

*Սբ̅ Մարիամ մայր ա̅յ. բարեխօսեա
մ̅ մեր մեղաւորաց՝ այժմ, և 'ի ժամու
մահու մերում Ամէն.

Բարեխօս լեր Մայր Ա̅յ *Ծա
ռայիս քո,

Հայր Ա̅Ծ արարիչն ամ̅ի, երկնի և
երկրի ստեղծօղ. Օգնական լեր և
պահապան քո ծառայ







*Երկոտասան *Առաքեալքն *Ընդ Տ՟ն մերոյ․ *Բարեխօս լերուք *Ծառայիս ա՟յ․



Գառն ա՟յ որ բառնայ զմեղս աշ․ Ողո

ըմն ծառայիս քո։



* Ո՜վ ի մէջ Ոսկւոյն Պատարագի
որ բառնաս զմեղս աշխարհի։ Մեծ մար
մին և արեան քո։ Օգնական լեր
Ծառայիս քո,



*Ք՛Ի գերեզմանն է. Տ՛Ր Ա՛Ծ ար-
ժանի արա տեսանել մարմնաւոր աչօք
և համբուրել զմ՛ հանգստացեալ զքո
Լուսաբուղխ Սուրբ գերեզմանդ.
և զՈղորմեայս քո,

*Ա՛ղթ. Տէրունական.

*Հայր մեր՛ որ յերկինսդ ես սբ եղի-
ցի անուն քո. եկեսցէ արքայութիւն
քո եղիցին կամք քո ոպ յերկինս և
յերկրի. զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտ
իս մեր, ոպ և մեք թողումք մերոց
պարտապանաց. և մի տանիր զմեզ ՚ի
փորձութի՛ այլ փրկեա զմեզ ՚ի չարէ.
զի քո է արքայութիւն և զօրութի՛
և փառք յաւիտեանս ամէն.



*Ս՟բ ա՟ծ, ս՟բ և հզօր, ս՟բ և անմահ որ խաչեցար վասն մեր. *Ծնար և յայտնեցար։ ☼Եկիր և գալոցես։ *Որ մատնեցար և թաղեցար մարմնով ՚ի սիրտ երկրի և յարեար ՚ի մեռելոց. համբարձար փառօք առ հայր։ *Որ եկիր և հանգեր յառաքեալսն. *Ո՛ր յայտնեցար ՚ի Թափօր լերինն. *Որ եկիր ՚ի փոխումն մօր քո և կուսի։ Ողորմեայ և պահեայ ա՟մ չարեաց և աղանդաւորաց ՚ի դէմաց ծառայիս ա՟յ, Աղօթք [illegible] դիւաց և [illegible] [illegible] • Եւ վասն [illegible] [illegible], Եւ վասն [illegible] [illegible] 'ի ցերեկս [illegible] [illegible].

ԹԱԳԱՒՈՐ ՔՐ

զօր՝ապաշտէն ծառայելոց փրկիչ ննջելոց, որ վասն մեր խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեն. մատնեցար ըմբռնեցար չարչարեցար խաչեցար և թաղեցար յարեար 'ի մեռելոց և համբարձար փառօք առ հայր զարթոյ զզօրութիւն քո և եկ 'ի կեցուցանել զգինս արեան քո տր. և մի՛ տար գերել սատանայի զքո փրկեալս. և մի՛ տար բնակութի չարին զտաճար անմաանդ քում սրբոյ. և մի լքեալս քեզ մարմին և անդամ, թողուր 'ի կորուստ և 'ի կատական չարին. այլ զթա՛ 'ի քո արարածս արարչական սիրով, տր ողորմեա մեզ. զի 'ի

խաչ քո պարծելով պարծեցաք և սա
պահեսցէ զմեզ յերեւելի և յաներե
ւոյթ թշնամոյն. ամէն. *Ծառայիս
ա՟յ Օգնական և պահա
պան եղիցի ամէն.

*Չար իշխանք հալածին. որք ընդ ծա
ռայս քո մարտնչին. յերեւելով նշան
խաչին. յաներեւոյթ կործանեսցին.

*Պարգեւիչ բարեաց մարդկան.

*Լոյսն առաւօտ ամենեսեան.

*Պատրաստեցո՛ զմեզ անխափան.

*Ի զպէտս հոգւոյ և մարմնական.

*'Ի քէն է գոհութի՟ իմ տ՟ր յեկեղե
ցիս մեծա օրհնեցից զքեզ:

*Ցոյց մեզ տ՟ր զողորմութիւնս քո
և զփրկութի՟ քո տուր մեզ:

*Ո՟չ մեծ են գործք քո տէր և
յոյժ խոր են խորհուրդք քո.

*Ո՛չ երկիցես դու յերկիւղէ 'ի գի
շերի և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ.





*[illegible] [illegible] սուրբ կոյսն Ա.Ծ-ածին.

ՔՋՍՆՈՒՆ ՍՄՊՆ Օրհնել·

զպաղատանս մեր ըն կալ·
'ի հանգստեան ժամու հա սեալ·
առ քեզ գոչեմք անձամբ թաղձեալ·
Բանին կենաց բարձող ե ղեր·
զա̃ծ մարմնով պարագրե ցեր·
առ բանն ա̃ծ բարեխօս լեր·
'ի փորձանաց զմեզ փրկել Ծառայիս
ա̃յ Օգնական լեր. ամէն.



*Աղօթք սրբոյն Յովհաննու կարապետին.

ԱՅԼ ԽՆ. ԲԱՐԵԽՕՍՈՒ-

թե Սբյն Յովհաննու կարապետին. Մովսէսի Ահարոնի Սամուէլի Նաթանայ Դաւթայ Ամովսայ Միքիայ Աբդիու Յունանու Նայումայ Ամբակումայ Սոփոնեայ Զաքարեայ Մաղաքեայ Դանիէլի. և ամ Սբ Մարգարէից. Օգնական լերուք ծառայիս այ.



*Աղօթք սբյն Ստեփաննոսի Նախավկային.

ՔԵԶ ՀԱՅՑԵՄՔ

արտասուագին. Նախավկայ տ͞ն արարչին. Սուրբ Ստեփաննոս բացող երկնին. Տեսօղ զՅ͞ս յաջմէ ծնօղին.
Լեր բարեխօս արեամբ քոյին.
Տալ մեզ հանգիստ՚ի յանկողնին.
Զարթուն լինիլ առաւօտին.
Բարեբանել զլոյսն անքըննին.
Բրիս լեր ծառայիս ա͞յ.



Աղօթք սրբոյն Գրիգորի Հօրս լուսաւորչին.

ԽՈՆԱՐՀԵՄՔ ՔԵԶ

Հայր պատուական. Տ͞ր մ͞ր Գրիգոր պետ պարթևեան. լեր մեզ պարիսպ և օգնական. Ծնօղ բարի ՚ի մեզ գթայ. զցրուեալ որդիս քո ժողովեա. ՚ի բանսարկուէն ըզմեզ փըրկեա. և ՚ի բարին առաջնորդեայ. ծառայիս ա͞յ ամէն.

*Աղօթք պահպանութեն.

ՀԱՅՐ ՍԲ ՍՐԲԵԱ ԶԻՍ Որդիդ սուրբ պահեա զիս. Հոգիդ սուրբ մաքրեա զիս. Հոգի Քի սրբեա զիս, Մարմին Քի փրկեա զիս, Արիւն Քի արբոյ զիս. Ջուր կողին Քի լուա զիս. Խաչն քի պահեա զիս. *Ով բարի Յս լուր ինձ և մի՛ մերժեր զիս 'ի քէն, և մի թողուր զիս. 'ի նենգութէ չարին պահեա զիս. 'ի ժամ մահուան կոչեա զիս, մերձ առ քեզ դիր զիս ընդ հրեշտակս քո. յամ չարէ պահեա զծառայս քո

*Աղօթք պահպանութեան.

ՏՐ ՅՍ ՔՐԻՍՏՈՍ ՕԳՆԱկան իմ և 'ի ձեռս քոյ եմ յամ ժամ դու գիտես զօգուտն իմ օգնեա ինձ և մի թողուր զիս կորնչել 'ի մեղս իմ այլ գթա՛ ստեղծուածս քո, և մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց վս մեղաց իմոց, զի առ քեզ ապաւինեցայ. բժիշկ երկնաւո՛ր՝ բժշկեա զանձն իմ զի մեղայ քեզ. առաջի քո են ամ ներքինս անձին իմոյ. և ոչ գոյ ինձ ապաւէն բաց 'ի քէն, տր՝ տր. կեցո՛ զիս ըստ ողորմութեան քում. զի ամաչեսցեն ամենեքեան որք յարուցեալ են 'ի վր իմ, և որք խնդրեն զանձն իմ կորուսանել՝ յետս դարձցին. զի դու տր կարող ես ամի, և քեզ փառք յաւիտեանս ամէն.



*Աղօթք Հրեշտակաց Պահպանութեան.

ԳԱԲՐԻԷԼ ՄԻՔԱՅԷԼ

Ռափայէլ Գրակուէլ Աթոնիէլ Բարակիէլ Փանուէլ Տածիէլ Սուգիէլ Սաղաթիէլ Սարագմիէլ Սարմիէլ Ուրիէլ Անանայէլ. և ամ Հրեշտակք և Հրեշտակապետք, որք ունիք իշխանութիւն 'ի վերայ ամ ցեղ սրր որ չորանայ ծառայիս այ Օգնական և պահպան լերուք. ամէն.

*Այս են անուանք Հրեշտակաց․

Սարիէլ․ Սարակմիէլ․ Գաւրիէլ․ Գանձիէլ․ Սեդրաք․ Միսաք․ Միսայէլ․ Եղեկիեայ․ Գանձիայ․ Սարմիայ․ Ուրիէլ․ Տածիէլ․ ուր այս անուանքս լինին, անդ ոչ մերձենումք Ծառայիս այ․



*Լ[illegible] գեհ[illegible], [illegible]·

ԱՅՐ ԳՈՒՏՆ ՅՈՐ

դանան և թերէր ծառ մի գեղեցիկ և պատուական և կայր 'ի մէջ գետոյն խաչանման սերովբէք և քերովբէք շուրջ կային զնովաւ բարձրաձայն աղաղակէին և ասէին սբ̃ սբ̃ սբ̃ Տ̃ր զօրութեանց լի են երկինք և երկիր փառօք քո· խնդրէին յա̃յ վ̃ն ակին աչաց· և ակնահարին · տանակին· դրուցակին· խաժուկին · մեղուշակին· և այլ ազգ չար ակին · գլխացաւի· և աչացաւի · խօլը խուլի · գնայունի · ծծացաւի · և սրտացաւի · փորացաւի · և միջացաւի · փ̃ ճկն, պիղծ ցաւոց՝ զոր ազատեալ եղիցի ծառայիս ա̃յ Օգնական եղիցի և պահապան· ամէն·

*Ողորմեա ինձ Տ̃ր զի հիւանդ եմ ես · բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ·

*Լոյս տուր Տ̃ր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ·

*Ա[illegible] չար նազարի և չար [illegible]· զոր Տ̃ր ա̃ծ պահեսցէ ամէն·

ՀՐԱՆԻԹ· ՀՐԱՓԱՅԼ·

Հրաշն· Համատուն· Համակեղ, որ էք սպասաւորք ա̃յ· դուք կապեցէք և պապանձեցուցէք զա̄մ չար աչք, և չար նիէթ, և չար խորհուրդն . կապք և կախարդութիք ընդ դէմ ծառայիս ա̄յ . չար կամքն չար աչքն ՚ի չար . ՚ի չար փուշն ՚ի բարկ կրակն . բարկ կրակն ՚ի քարն . քարն ՚ի յանատակ ծովն . ա̄մ չար աչք, և չար նիէթ, և չար լեզու, և չար խորհուրդ, և չար զգայարանն . պատառի խաւար դառնայ ծառայիս ա̄յ   օգնական և պահապան եղիցի ամէն .

……

*Աղօթք վասն ճանապարհորդաց .

ԿԵՆԱՆՈՒԷԼ . ԿԵՆ

դանամահէլը, որ էք սպասաւորք ա̄յ . դուք ճանապարհորդակից լերուք ծառայիս ա̄յ   և խաղաղութեամբ տարէք զսա ՚ի տեղի իւր՝ և ՚ի բարի վաճառս և շահաւոր արարէք սմա անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . այժմ և միշտ և .

……

*Աղօթք չար նազարի և չար ընտանի .

Տ̄Ր Ա̄Ծ ՄԱՐԴԱՍԷՐ

մարդասիրի հօր որդի . դու պահապան և օգնական յուսացելոց ՚ի քեզ ողորմութեամբ քո ՚ի ծառայս . և պահեա անփորձ ՚ի չարէ, և անսայթաք յորոգայթէ յերևելի և աներևոյթ թշնամւոյն • պահեա՛ 'ի չար աչաց • և 'ի չար լեզուէ· 'ի սրէ· 'ի նետէ· 'ի նիզակէ· 'ի խանչարէ· 'ի դանակէ· 'ի պատերազմէ, և յա՟մ պատուհասէ· 'ի գողէ, և 'ի հարամեաց· 'ի յարբած մարդոյ· 'ի յարխնահեղաց· և 'ի մարդասպանաց • յայլազգեաց, և 'ի յանօրինաց· 'ի գողնոց • և 'ի ճեպեաց· և ա՟մ թիւ[illegible]րայց • պահեա՛ և փրկեա՛ ըզծառայս քո [illegible] օգնական եղիցի և պահապան ամէն.

*Ապրեցո՛ զիս տ՟ր 'ի մարդոյ չարէ յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս.

*Ա՟ծ յօգնել ինձ նայեաց և տ՟ր ընկերել ինձ փութա՛.

*Տուր զօրութի՟ ծառայի քո, կեցո՛ զորդի աղախնոյ քոյ· և արա՛ առ իս նշան բարութե՟.

……

ԱՅԼ ԵՒ ԲԱՐԵԽՕՍՈՒ-

թե՟ սուրբ թագաւորացն *Եզեկիայ· *Սեդեկիայ · *Մանասէի· *Աբգարու· *Կոստանդիանոսի· *Տրդատայ· *Սմբատայ· *Եր՟ Թէոթոսեանց, և այլոց սբ՟ Թագաւորացն և Ա՟ծասէր իշխանացն, բարեխօսութեամբն՝ պահեա՛ և փրկեա՛ զծառայս քո ամէն.



[illegible]







նչելագործ սբ. Նշանի • ապարանից սբ. Նշանի • կարմրակ սբ. Նշանի. ծիծառն սբ. Նշանի• յաղթամարայ սբ. Նշանի • սահանու սբ. Նշանի • վարասի սբ. Նշանի • կիրիոսի սբ. Նշանի• Կոստանդիանոսի սբ. Նշանի• տապանակի սբ. Նշանի• վրաց և հոռոմոց սբ. Նշանի • կոստանդիանու պօլսի սբ. Նշանի• հապէշու և ղփտոյ սբ. և ամէնքրենը երևեցան՝ խաչելոյս այսմիկ՝ և կոչեաց աբրհամ տեղին այն, զի սբ. երևեցան. և սառայ ետես զորդին իւր ուրախ եղև յոյժ ուրախութբ մեծ. և ասհակ ծերացեալ ալեօք ծաղկեցաւ և հանգեաւ խաղաղութբ ՚ի քս. Բարեխօսութբ նահապետին հօրն մերում աբրահամու, պահեա և փրկեա զծառայս նշանի • հացունեաց ս՟բ նշանի • հրաշափառ ս՟բ նշանի, որ 'ի գալստեանն յառաջագոյն գայ• գայկըլա սուրբ նշանի• խրշտու ս՟բ նշանի• ձնդու սուրբ նշանի• կոպնկայ ս՟բ նշանի• պլղեու ս՟բ նշանի • սիմայի ս՟բ նշանի • բսաու ս՟բ նշանի • նսարի ս՟բ նշանի •

ա՟յ օգնական եղիցի և պահապան ա՟մ չարէ ամրածածուկ պարսպեալ պահեսցէ մինչև 'ի խորին ծերութի՟ն• և յետ ատեացս ելանելոյ վերինն երուսաղէմայ արժանի արասցէ• ամէն•

* Սո՛ այլ ա՟մ ս՟բ նշանացն ոյք ընդհանուր տիեզերս կցեն • սոցին ս՟բ և արժանաւոր բարեխօսութ՟ն ողորմեքս՟ ա՟ծ ծառայիս քո Օգնական և պահապան լեր ա՟մ ժամ• ամէն





* Աղաչեալ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] Գրիգորի Նարեկացւոյն. ԺԲ

ԸՆԿԱԼ, ԲԱՐԵԳ ՅՐՍԻ

Թէ՛ տր ած հզօր, զդառնացեա
լս զաղաչանս. մատիր գը
թութ առ պատկառեալս դի
մօք. փարատեա ամենապարգեւ՝ զամօ
թալի տխրութիւնս. բարձ ի ինէն ողոր
մած՝ զանտանելի ծանրութիւնս. ան
ջրպետեա հնարաւոր՝ զմահացու կի
րութիւնս. անարգեա միշտ յաղթող՝ զխա
բողին հնարութիւնս. բրդեա վերնային,
զմաղձելոյն մառախուղ. կապեա կեցու
ցիչ զկորուսչին ընթացմունս. ցրուեա
ծածկատես՝ զմեքենողին չար դըթ
մունս. խորտակեա անքննելին՝ զմարտո
ղին դիմեցմունս. ծնագրեա քո ան

ւամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս·
պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ
տաճարիս· գծագրեա՛ քո արեամբդ՝
զմուտ սեմոց սենեկիս· կերպացո՛ ըզ
քո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթողիս·
ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս
խշտիս· մաքրեսցես ՚ի հաղբից, զծած
կաւան անկողնոյս· պահեսցես քո կա
մաւդ՝ զտառապեալ անձն հոգւոյս· ան
խարդախ արասցես՝ զքո շնորհեալ
շունչ մարմնոյս· կացուսցես շրջափակ
զպար զօրոյդ երկնայնոյ· կարգեսցես
՚ի դիմի ընդ դէմ դիւացն դասու·
Տուր հանգիստ բերկրութե մահա
հանգոյնս նիրհման ՚ի խորուն գիշե
րիս· Բարեխօսութբ եւ հայցուածովք
սրբուհւոյ ածածնին· եւ ամ ընտրե
լոց· Ամփոփեալ պարուրեա՛ զմտու
հան տեսութեց զգայարանացս իմաս
տից· անզարհուրելի զետեղմամբ ՚ի
ծփական խռովութեց կենցաղական
զբաղմանց, անրջական երազոց, խու
լականաց ցնորից· Յիշտկաւ քո յու
սոյդ անմոռանալի պաշտպանեալ· Իւ՛
սթափեալ վերստին· ՚ի ննջմանէ ծան
րութեց· ամենազգաստ արթնութբ· հո
գենորդ զուարթութբ ՚ի քեզ արձա
նացել· Զայս ձայն մաղթանաց բուր
մամբ հաւատոց· Քեզ ամէն օրհնել
Թագաւոր փառաց, անճառելից փառա
բանողաց, երկնագումար խմբից եր
գակցել՝ յերկինս առաքել· Զի դու
փառաւորեալ ես յամ արարածոց· յաւի
տեանս յաւիտենից ամէն· Օգնկն եւ
պշտպան եղիցի ծառայիս այ

*Նորին Գրիգորի ասացեալ.

ՈՐԴԻ Ա̃Յ ԿԵՆԴԱՆւոյ. օրհնեալդ յա̃մ. հօրդ ահաւորի անքննելին ծնունդ. որ ոչ տկարանայ առ ՚ի քէն և ոչ ինչ. որ ՚ի ծագել անստուեր նշուլից յողորմութե̃դ քո փ̃ով, հալին մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. քաւին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տանապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո. ամենակալդ՝ քաւիչդ ա̃մ. որ ոչ ենէր կորուսանել զմարդկան հոգիս՝ այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութ̃դ. զի դու միայնես յերկնի անձառ՝ և յերկրի անզննելին. ՚ի տարր գոյից՝ և յեզր ծագաց աշխարհի. Սկիզբն ա̃մ՝ և յա̃մ, ա̃մին լրմամբ օրհնեալդ ՚ի բարձունս. և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ ա̃յ վայելէ փառք յաւիտեանս ամէն.



*Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին·

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵ̃

սբ̃յն գէորգայ զօրավարին· և անդրէլի զինաւորին· և ջորից զինւորացն, քասասի և սեբի և տիգի և բասիլիդեա՛· *Մ՝ինասա կերմոգենեա՛ և գրաքոսի, և սբ̃ց ատովմեանց· ոսկեանց, և սուքիասանց · և խարիտեանցն, և այլ ամ̃ սբ̃ց՝ բարեխօսութե̃ պահեա և փրկեա զծ̃յս ա̃յ



*Մաղթ. սբյ Սարգսի զօրավարին.

ԵՐՋԱՆԻԿ ԶՕՐԱկան սբդ սարգիս ՚ի մեզ գըթայ. մատո՛ ձայն մեր մաղթանաց. առ ողորմածն քո տծ. այն որ օրհնեալէ և գըթած. քաջ սպառազէն սուրբդ սարգիս.

*Սիրով արքայս զձեզ ընկալ եալ.
և մեծագոյն փառօք պատուե եալ.
մեծ զօրավիգ մեզ առաք եալ.
՚ի այլաստան պահակ եդ եալ.
քաջ ըսպառազէն սբդ սարգիս.
*Նոյնոր կրկնեմք ոք նշա նիդ.

և նկարեալ քո պատկեր ընդ ·
մեզ հասանիլ 'ի յօգնու թիւն ·
ամենահաս սուրբդ սարգիս ·
*Իսկ գերելոց այլասե ռից ·
որք 'ի կապանս են յերկա թիս ։
հան զնոսա 'ի չար կա պից ·
մեծ գերեհան սէգ սարգիս ·
*Հօրն փառք Որդոյն պատիւ և Ս̃բ
Հոգ̃ոյն յաւիտեանս ամէն ։ Օգնա
կան և պահապան եղիցի ծա ռայիս
Ա̃յ ։ ամէն ·



*Սէրոյ *[illegible] *Բայ *[illegible]
*Տէրն Մեր Յ̃ս Ք̃ս ։

ԿԻՆ ՔԱՆԱՆԱՑԻ

Յս գնաց 'ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի։ *Եւ ահա կին մի քանանացի 'ի սահմանաց անտի նց։ ելեալ աղաղակէր եւ ասէր։ ողորմեաց ինձ Տր որդի դաւթի։ դուստր իմ չարաչար այսահարի։ *Եւ նա ոչ ետ նմա պատասխանի։ *Եւ մատուցեալ աշակերտքն նր աղաչէին զնա եւ ասէին արձակեա զնա, զի աղաղակէ զհետ մեր։ *Նա պատասխանի ետ եւ ասէ ոչ ուրեք առաքեցայ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի։ *Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա եւ ասէր՝ Տր օգնեա ինձ։ *Պատասխանի ետ նմա եւ ասէ։ ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց։ *Եւ նա ասէ այո Տր, քզի եւ շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ Տն իւրեանց։ *Յայն ժամ պատասխանի ետ նմա Յս [illegible] է ով կին դու մեծ են հաւատք քո եղիցի քեզ որպէս և կամիս։ *Եւ բժշկեցաւ դուստր նր 'ի նմին ժամու։ Պաշտպան եղիցի ծառայիս այ ամէն։



*Սբ *Աւետարան *Ըստ *Մարկոսի.
*Տէրն Մեր Յս Քս

ԵՒ ՆՈՅՆ ԺԱՄԱՅՆ Ճեպեաց զաշակերտսն մտանել 'ի նաւն և յառաջագոյն քան զնա երթալ յայն կոյս 'ի Բեթսայիդայ մինչև ինքն զժողովուրդսն արձակիցէ. *Եւ հրաժարեալ 'ի նոցանէ ել 'ի լեառն կալ յաղօթս. *Եւ իբրև երեկոյ եղև, էր նաւն 'ի մէջ ծովուն և ինքն 'ի ցամաքի. *Եւ ետես զնոսա հողմակոծեալս 'ի վարելն զի էր հողմն ընդդէմ նոցա, և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ՚ի վ̅ր ծովուն և կամէր զանց առնել առ նոքօք. Նոքա իբրև տեսին զի գնայր ՚ի վերայ ծովուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի. և աղաղակ բարձին. * Քանզի ամենեքին տեսին զնա և խռովեցան. * Եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ. քաջալերացարուք ես եմ մի երկնչիք. * Եւ ել ՚ի նաւն առ նոսա, և դադարեցաւ հողմն.

Պահպան եղիցի ծ̅յիս ա̅յ



*Աւ̃ *Ղուկասու *Բու *Գ ուխտաւոր.
*Տէրն մեր Յս Քս.

ԵՒ ԻՋ ԿԱՓԱՌՆԱ

նայում ՚ի քաղաքն գալիլեացւոց ուսուցանէր զնոսա ՚ի շաբաթուն. *Եւ զարմանային ընդ վարդապետութի նր զի իշխանութբ էր բան նր. *Եւ էր ՚ի ժողովրդեանն այր մի, որ ունէր այս դիւի պղծոյ եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ. *Եւ ասէ Թուլացո՛, զի՞ կայ եւ քո Յս Նազովրեցի եկիր կորուսանել զմեզ, գիտեմ զքեզ ով ես սբն այ. *Սաստեաց ՚ի նա Յս եւ ասէ պապանձեաց եւ ել ՚ի դմանէ. *Օ գետնեաց զնա դեւն ՚ի մէջ անդր եւ ել ՚ի նմանէ, եւ ոչ ինչ վնասեաց նմա. *Եւ եղեն զարմանալիք ՚ի վր ամենեցուն խօսէին ընդ միմեանս եւ ասէին, զինչ է բանս այս, զի իշխանութբ եւ զօրութբ սաստէ այսոց պղծոց եւ ելանեն. *Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամ տեղիս շուրջ զգաւառաւն. Օգնական եւ Պահապան եղիցի ծառայիս այ



*Սբ *Աւետարան *Ըստ *Յօհաննու. *Տէրն մեր Յս Քս.

ԵՒԵԿՆ ԴԱՐՁԵԱԼ ՚ի Կանայ Գալիլեացւոց. ուր արար զջուրն գինի. Եւ անդ էր թագաւորազն մի, որոյ որդին հիւանդ կայր ՚ի Կափառնայում. *Նա իբրեւ լուաւ եթէ Յս եկալէ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեայ, եկն առ նա, եւ աղաչէր զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նր, քանզի մերձ էր մեռանել. *Ասէ ցնա Յս. եթէ ոչ

նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ
հաւատայք։ *Ասէ ցնա Թգ̃աւորազ
տ̃ր՝ էջ մինչ չև մեռեալ իցէ մանուկն
իմ։ *Ասէ ցնա Յս̃, երթ, որդին քո
կենդանի է. և հաւատաց այրն բանին
զոր ասաց ցնա Յս̃, և գնաց։ Պահպան
եղիցի ծառայիս այ̃



*Աղօթք խափանաց դիւաց։

ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍտունն եհաս զիշխանն դիւաց
խաւարին, գտանայր իբրև զաւձ
ճչէր ոճ̃ զվիշապն։ *Ասէ սողոմոն
ով պիղծ և անիծեալ զինչ ես դու.
ասէ դևն ես եմ իշխանն դիւաց, և
մայր ա̃մ չարեաց և մեղաց. ես եմ որ
ատելութիւն ածեմ ՚ի մէջ եղբարցն
ածեմ վէճ և կռիւ և խռովութի̃. և

պոռնկութի՟ մտանեմ 'ի սիրտ մարդկան, և բերեմ սերմանեմ զչար ցանկութի՟ն ։ *Ասէ սողոմոն բարձրացիր որ ես տեսանեմ. և բարձրացաւ քան զերկինս՝ և կամէր անկանիլ 'ի վ՟ր նր՟. *Ասէ սողոմոն՝ փոքրացիր. և փոքրացաւ քան զհատն մանանխոյ. և սողոմոն կալաւ զնա և եդ 'ի յաջ մատա եդ 'ի վերայ ական մատանւոյն. Այլ և նոյն տո՟նակաւն, և յակոբայ սան դրխտաւն. և ահարօնի գ՟ւազանաւն. և կոնոնոսի աղօթիւքն. հալածեալ և խափանեալ եղիցի ա՟մ չար դևքն. և ամ՟նյն չար ճնարքն արձակեալ և հեռացեալ եղիցին 'ի ծ՟ռյէս ա՟յ

*Աղօթք վ՟ն ջերմ ծննդեան.

ՆԱՅԵԱՑ ՅԱՂԱՉԱՆՍ

ծառայիս քո և աղախնոյս. որ հաճեցար յաղաչանս աննայի՟ն և ետուր նմա զաւակ զմեծն Սամուէլ. և եղիսաբեթին և ետուր նմա զաւակ ըզ մկրտիչն Յովհաննէս. և յոյակիմայ և աննայի, ետուր նոցա զաւակ ըզ Մարիամ Ա՟ծածինն. և որ բժշկեցեր զջուրն առ եղիսէի՟ մարգարէի՟ և ետուր զաւակ երկրին այն. բարեխօսութե՟ սոցին տուր զաւակ ծա ռայիս տ͞ոյ ամէն .

* Ո͞պ աչք ծառայի ՚ի ձեռն տ͞ն իւրոյ . և ո͞պ աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ . * Այնպէս են աչք մեր առ քեզ տ͞ր ա͞ծ մեր . մինչև ողորմեսցիս ՚ի վերայ մեր .

ԱՄԷՆ ԱՄԷՆ ԱՍԵՄ ձեզ . զի լայջիք և ողբասջիք . և յաշխարհ խնդասցէ . Դուք տրտմեսջիք . այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի . * Կին յորժամ ծնանիցի տրտմութ͞ի է նմա զի հասանէ ժամ նորա . այլ յորժամ ծնցի զմանուկն ոչ ևս յիշէ զնեղութիւն վ͞ս խնդութ͞ե . զի ծնաւ մարդ յ͞շ .

* * *

* Աղօթս [illegible]

ՍՈՒՐԲՆ ՍԻՕՎ͞Ն ՍԷ͞Ն

Սիսի և ա͞րն Սիսիանէ և ա͞րն ՚Նօվիէլ և ա͞րն Տաղիէլ Հրեշտակք , Հրամանաւ͞ն ք͞ի յորս էին եղեալ և առին զձայն երեխային , գնացին և տեսին զալն ՚ի չարութ͞ե բռնեցին և կապեցին զալն ՚ի յալին վէմ . եկեալ մայրն ալին և ասէ ինչ իցէ այս . * Ասացին այս ինչէ՛ , որ մտանէք ՚ի մօրն յորովայն . զերեխային զմիսն ուտէք , զարիւնն ըմէք , և լոյս աչացն խաւար դարձուցանէք . ասէ մայրն ալին , թողէք որդին իմ . որ տուն որ ձեր անուանքն յիշեն , անդ ոչ մերձենամք ՚ի ծառայն տ͞ոյ . յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս͞բյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն

*Աղօթք վն վաճառու եւամ բանի.

ՅԱՋՈՂԱՄ ԲԱՑԱՆ

երկինք և երկին հրեշտակք. ևամենեին բանալիք, ՏՐ. հրամայեաց տէրն մեր յս քս, և ասէ՝ ուր երթայք. պատասխանի ետուն հրեշտակքն և ասեն, երթամք տէր մտանեմք 'ի տուն ծառային քո. զդուռն բարւոյ բանամք. զդուռն ողորմութեն և վաճառի. հրամայեաց տէրն մեր յս քս և ասէ գնացէք, և ես օգնական լինիմ ծռյին իմոյ

. յորժամ կանգնի առաջի դատաւորաց և թագաւորաց և ընկերաց. առնեմ զամ մարդոյ սիրտ. քան զնուշն անուշ. քան զշաքարն քաղցր. քան զմոմն կակուղ. քան զջուրն խոնարհ. քան զարեգակն պայծառ. քան զլուսին 'ի լրումն. փառօք և պատուօք 'ի դէմ ծառայիս այս ամէն.

*Աճ վայելուչ սա ցէ.
*Ամս հէմայիլս որ գրուա ծէ.
*Հայրք և եղբարք որ սա առ ցէ.
*Խաղաղութեամբ վայելես ցէ.
*Մէհար խուրըն պատահես ցէ.
*Խորհուրդ բարին կատարես ցէ.
*Ի խորին ծերութի հաս ցէ.
*Հայր մեղայի զմեղ միշես ցէ.
*Այ յետ՝ ասատեացս որ նա եղ ցէ.
*Արքայութեն ժառանգես ցէ

*Տպեցաւ *Հէմայիլս *'ի Թուին
*Հայոց, ՌՃՀԶ. *Յոհաննիսի Ձռ.

Վկայագիր

Այս նմոյշը երկար եղած է
Անթիլիասի Միացեալ Երգչախումբին վարիչ
պր. Սուրէն Գնձաղեանի ձեռքերուն մէջ
և յիշեալ երգչախումբին անունով
ու իմ խնդրանքով հանձնուած է
ՄԻԱՍՆԻԿԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Անթիլիաս, 25-5-1975